Հաստատում եմ

Տնօրեն _____ Ն. Ջհանգիրյան

31. 08 2022թ.

<<Արավուսի տարրական դպրոց>> ՊՈԱԿ

ԴԱՍՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասարան՝ 3-րդ

Դասվար՝ Ն. Բաղդագյուլյան

Տնօրեն՝ Ն. Ջհանգիրյան

2022-2023 ուս տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներածություն – 2022-2023 ուստարում 3-րդ դասարանում սովորում են հինգ աշակերտ: Աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Նրանք սիրում են միմյանց հետ շփվել, զրուցել, համագործակցելով ստեղծել ընդհանուր գեղեցիկ որևէ հետաքրքիր բան: Ակտիվորեն մասնակցում են դպրոցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները տարվա ընթացքում- Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասրանի վարքին և ուսման առաջադիմությանը: 2022-2023 ուստարում բարձրացնել ուսման որակն ու առաջադիմությունը, ուժեղացնել կարգապահությունը, չուշանալ դասերից, դասերին ներկայանալ պատրաստ: Աշակերտների մեջ սերմանել սեր դեպի հայրենիքը, ամրապնդել ծնող-դպրոց կապը, պարբերաբար ստուգել դասագրքերը, դպրոցական գույքը: Աշակերտների հետ անցկացնել զրույցներ էկոլոգիական և անձնական հիգիենայի վերաբերյալ: Ստեղծել առողջ և համերաշխ մթնոլորտ, սերմանել ընկերասիրություն, համերաշխություն, հարգանք մեծերի և շրջապատի հանդեպ:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն-ը** *սերտ կապված է բարոյական դաստիարակության հետ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայ ժողովրդի հավատքին, կրոնին և եկեղեցուն, ծանոթացնել պատվիրաններին, ակտիվորեն մասնակցել եկեղեցական տոներին և կազմակերպվող միջոցառումներին: Աշակերտների մեջ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Այդ նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր կենտրոններ: Սաները կծանոթանան եկեղեցական տոներին:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն *Սերմանել սեր դեպի գեղեցիկը, շրջապատում կարողանալ տարբերել գեղեցիկ երևույթները: Ծանոթացնել հայտնի նկարիչների, քանդակագործների աշխատանքներին: Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի թանգարաններ և ցուցահանդեսներ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն -ը սովորողներին կծանոթացնի հայ ժողովրդի արժանի զավակներին, հարգանք հայրենիքի, հերոսներին, նրանց կատարած սխրանքներին, պայքարներին: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն, անձնազոհություն և արժանապատվություն:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Ծանոթացնել հայ մարզիկների ձեռքբերումներին, աշակերտներին ոգևորել դեպի սպորտը, ծանոթացնել սպորտաձևերին, կարևորել ֆիզիկական դաստիարակության դերը առողջ սերունդ դաստիարակելու գործում: Ձևավորել խնամք և հոգատար վերաբերմունք սեփական անձի՝ մարմնի կեցվածքի նկատմամբ: Զարգացնել կամային հատկանիշներ, նպատակասլացություն:

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և կարևորել դրա նշանակությունը մարդու համար: Ծանոթացնել տարբեր մասնագիտությունների և աշխատանքների: Աշակերտների մեջ սերմանել այն գաղափարը, որ միայն աշխատանքի միջոցով կհասնեն հաջողությունների: Արժևորել աշխատանքով ստեղծածը: Սովորեցնել գնահատել սեփական ու այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն Մեծացնել աշակերտների պատասխանատվությունը բնության հանդեպ, ակտիվորեն մասնակցել դպրոցում և կյանքում կատարվող բոլոր միջոցառումներին, լինել հոգատար շրջապատի նկատմամբ, սիրել մաքուր պահել շրջակա բնությունը:

4. Դպրոց-ընտանիք կապը

Դաստիարակությունը իր արդյունքն է տալիս, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այդ իսկ պատճառով պետք է ամուր պահել դպրոց- ընտանիք կապը: Ամրապնդել ծնող-դպրոց կապը, հանդիպել ծնողների հետ, պարզել նրանց մտահոգող հարցերը, անհրաժեշտության դեպքում տալ խորհուրդներ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
I	<<Քովիդ 2019>> համաճարակից պաշտպանվելու կանոնների ծանոթացում: Միասին հաղթահարենք համաճարակը: Ինչպես պաշտպանվել վարակիչ հիվանդություններից:	աշակերտ դասղեկ
II	Կարգապահական կանոնների ծանոթացում: Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները: Անցկացնել ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհրդի կազմը: Դասարանի ավագի ընտրություն:	աշակերտ դասղեկ
III	<<Անկախ Հայաստան>>: Երգել, ասմունքել և պարել տոնին համապատասխան:	աշակերտ դասղեկ
IV	<<ՈՒսուցչի օր>> զրույց դպրոցի նշանակության, ուսուցչի ազգանվեր առաքելության մասին, երգել ուսուցչին նվիրված երգեր: Գրել շարադրություն <<Իմ սիրելի ուսուցիչը>> թեմայով	աշակերտ դասղեկ
V	<<Ընտանիք և պարտականություն>>	աշակերտ դասղեկ
VI	Մաքրությունն առողջության գրավական: Անձնական հիգիենայի պահպանման կանոնները:	աշակերտ դասղեկ
VII	Զրույց << Վնասակար սովորությունները>>	աշակերտ դասղեկ
VIII	Անվտանգ վարքագիծ: Համակարգիչը թշնամի, թե բարեկամ:	աշակերտ դասղեկ
IX	Զրույց <<Ինչպես կցանկանայի, որ ապրեին մանուկները>>:	աշակերտ դասղեկ
X	Սովորենք իրար հարգել և հասկանալ: Ես սիրում և հարգում եմ մեծերին:	աշակերտ դասղեկ
XI	Ճանապարհային երթևեկություն: Աղետաբեր երկրաշարժ:	աշակերտ դասղեկ
XII	Ինչպիսի եղանակ եմ սիրում ես: Իմ ամենասիրելի օրը:	աշակերտ դասղեկ
XIII	Զրույց <<Ինչն եմ կարևորում ընկերության մեջ>>:	աշակերտ դասղեկ
XIV	Ուրախ Ամանոր: Արի՛, Նոր տարի: Զրույց Ամանորի պատմության, տոնակատարության, եղևնու՝ որպես տոնածառ դառնալու պատմության մասին:	աշակերտ դասղեկ

XV	Հայրենիքը սկսվում է տնից <<Ես և իմ հայրենիքը>>: <<Իմ համայնքը>> թեմայով անցկացնել զրույց: Բացատրել ,,համայնք,, հասկացությունը, մեր համայնքի պատմությունը:	աշակերտ դասղեկ
XVI	<<Կեցցե Հայոց բանակը>>:	աշակերտ դասղեկ
XVII	<<Իմ սիրած մասնագիտությունը>>:	աշակերտ դասղեկ
XVIII	Զրույց <<Ինչպես եմ պատկերացնում իմ ապագան>>:	աշակերտ դասղեկ
XIX	Զրույց << Ինչպիսի զրքեր եմ նախընտրում ընթերցել>> Պահի՛ր, պահպանի՛ր զրքերդ ու տետրերդ:	աշակերտ դասղեկ
XX	Գրիք նվիրելու օր: Անաղարտ պահենք ոսկեղենիկ մայրենին: Հովհ.Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մանկագիր, հեքիաթագիր:	աշակերտ դասղեկ
XXI	<<Ինչ եկեղեցական տոներ գիտեմ>>:	աշակերտ դասղեկ
XXII	<<Մայր իմ անուշ ու բարի>>: Բացիկների պատրաստում մայրիկների համար:	աշակերտ դասղեկ
XXIII	Զրույց <<Արդյոք կուզեի ապրել մի ուրիշ քաղաքում>>:	աշակերտ դասղեկ
XXIV	<<Ինչքան եմ սիրում գարունը>>: Նկարել գարնանային տեսարան:	աշակերտ դասղեկ
XXV	Կենդանիներն ու թռչունները մեր շրջապատում:	աշակերտ դասղեկ
XXVI	Ինչպես պահպանել բնությունը: Ովքեր են աղտոտում այն:	աշակերտ դասղեկ
XXVII	Զրույց <<Որտեղ կուզեի ճանապարհորդել>>:	աշակերտ դասղեկ
XXVIII	<<Եթե ես ունենայի կախարդական փայտիկ,....>>:	աշակերտ դասղեկ
XXIX	Զրույց << Ինչ է սուտը և ինչ է ճշմարտությունը>>:	աշակերտ դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը:	աշակերտ դասղեկ
XXXI	Զրույց << Օգտակար և վնասակար սնունդ>>: Ինչպես ճիշտ սնվել:	աշակերտ դասղեկ
XXXII	Զրույց <<Ինչ է համագործակցությունը>>:	աշակերտ դասղեկ
XXXIII	Ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում:	աշակերտ դասղեկ
XXXIV	Զրույց <<Ինչպես եմ անցկացնելու ամառային արձակուրդը>>:	աշակերտ դասղեկ